

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ. նոյեմբերի 20-ին կայացած թիվ 2 նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին ներկա էին 35-ը:

Նիստին ներկա էր ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր՝ ակադեմիկոս Գ.Գ.Գևորգյանը

Օրակարգում՝

- Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը

ԵՊՀ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լսեցին՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանի 2016-2017 ուս. տարվա հաշվետվությունը:

Հարգելի գործընկերներ.

1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ

Նախ ուսանողների թվաքանակի մասին: Ներկայումս՝ 2017/18թթ ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում սովորում են 526 ուսանող. ընդ որում՝ առկա համակարգի բակալավրիատում՝ 364, մագիստրատուրայում՝ 110, իսկ հեռակա համակարգի բակալավրիատում՝ 52 ուսանող /պատկեր 1/: Համեմատելով ուսանողների այս թվաքանակը վերջին երկու ուս.տարիների թվաքանակի հետ (2016/17թթ ուստարում՝ 521, 2015/16թթ ուստարում՝ 511, պատկեր 2) համոզվում ենք, որ վերջին տարիներին դիտվող համալսարան ընդունված ուսանողների թվաքանակի փոփոխությունները, ինչը ընդհանուր առմամբ նվազում է արձանագրում, բարեբախտաբար, ավելի քիչ է ազդում մեր ֆակուլտետ ընդունված ուսանողության ընդհանուր քանակի վրա: /պատկեր 3/: Սա հատկապես դրսևորվեց այս տարվա ընդունելության արդյունքներում: Հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների թվաքանակի էապես նվազումը բերեց մեր համալսարան ընդունված ուսանողների զգալի նվազման (նախատեսված տեղերի գրեթե 23%-ով), ինչը մեր ֆակուլտետում կազմեց միայն 15%: Արդյունքում, համալսարանի 52 մասնագիտություններից միայն 18-ի գծով լրացվեցին բոլոր հայտարարված տեղերը և այդ 18-ի մեջ էին մեր երեք մասնագիտություններից երկուսը՝ «կենսաբանություն» և «կենսաքիմիա» մասնագիտությունները: Ցավոք, «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտության տեղերի մեծ մասը, այդ թվում նույնիսկ մեկ պետպատվերի տեղ, մնացին

թափուր: Այս միտումը, որ դիտվում է վերջին 5-6 տարիների ընթացքում, երբ լրացվում են երկու մասնագիտությունների տեղերը, իսկ կենսաֆիզիկան, կենսաինֆորմատիկայի հետ, հայտարարված թե՛ միասին և թե՛ առանձին, միշտ ունենում է թափուր տեղեր, ունի տարբեր պատճառներ, որոնցից ամենակարևորին ուզում եմ անդրադառնալ՝ փոքր-ինչ ընդմիջելով հաշվետվության շարադրումը:

Վերջին տարիներին դիտվող այս երևույթը, կարծում եմ, ոչ այնքան այս բավական արդիական մասնագիտությունների կամ ընդհանուր առմամբ՝ կենսաբանության նկատմամբ մեր հասարակության հետաքրքրության նվազման արդյունք է, (հատկապես եթե նկատի ունենանք ֆակուլտետի մյուս մասնագիտությունների գծով ընդունելության բարվոք պատկերը), այլ նախ և առաջ ավագ դպրոցներում առկա ուսուցման կազմակերպման լուրջ բացթողման հետևանք: Դատեցեք ինքներդ, ավագ դպրոցներում բնագիտական հոսքը 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում բաժանվում է երկու մասի՝ կենսաբանաքիմիական և ֆիզիկամաթեմատիկական ենթահոսքերի. ընդ որում առաջին ենթահոսքում աշակերտը մասնագիտության ընտրության տեսակետից վերջին երեք վճռական նշանակություն ունեցող ուսումնական տարիների ընթացքում հիմնականում ուսուցանում է կենսաբանություն և քիմիա՝ լավագույն դեպքում, հպանցիկ վերաբերմունք ցուցաբերելով մաթեմատիկային և ֆիզիկային, իսկ երկրորդ ենթահոսքում՝ դիտվում է ճիշտ հակառակը: Հայտնի է, որ ավագ դպրոցների գործունեության նպատակներից էր նաև դիմակայել մասնավոր դասուսույցների ինստիտուտին, և եթե համարենք, որ դա իրականացվում է, ապա ստացվում է, որ իրականացվում է ժամանակակից գիտությունների համար շատ կարևոր ինտեգրացիոն ոլորտների գծով մասնագետների պատրաստմանն ի վնաս: Կարծում եմ, որ այս հարցը պետք է բարձրացվի ՀՀ Կրթության և գիտության նախարարության առջև, որպեսզի դպրոցներում գործի մեկ բնագիտական հոսք՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների համահավասար ժամաքանակի դասընթացներով: Եվ թող երեխան որոշի, թե որ առարկաներին կամ առարկաների գույզին է տալիս գերակայություն:

Վերադառնամ հաշվետվությանը: Ֆակուլտետի ուսանողության վերը նշված թվաքանակին եթե ավելացնենք նաև առկա և հեռակա ուսուցմամբ մոտ երկու տասնյակի հասնող ասպիրանտների թիվը, ապա կարելի է փաստել, որ վերջին երեք ուստարիների ընթացքում ֆակուլտետը սովորողների թվաքանակի էական փոփոխություններ չի արձանագրում. Սովորողների թիվը 530-550-ի սահմաններում է: Սա վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք օբյեկտիվ դժվարությունները, որոնք առկա են հանրապետությունում դեմոգրաֆիկ իրադրության և բնագիտական մասնագիտությունների նկատմամբ, ընդհանուր առմամբ, հետաքրքրության նվազման առումով: Իհարկե, պետք է նշեմ, որ այս տարի նույնպես, ինչպես վերջին տարիներին, բոլոր երեք մասնագիտությունների գծով վճարովի համակարգում մրցույթն անցկացվել է միայն մեկ քննության՝ կենսաբանության արդյունքներով, և սա չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ ուսանողների հետագա ուսումնառության պրոցեսում, ինչի վկաներն ենք բոլորս՝ թե դասախոսները և թե դեկանատի աշխատակիցները:

2. Ուսումնական աշխատանքներ

Ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում ևս ընթացել են բնականոն հունով՝ շնորհիվ առկա փորձառու պրոֆեսորադասախոսական անձնակազմի և երիտասարդ, գործին նվիրված դասախոսների: Շարունակվել է ֆակուլտետի դասախոսական անձնակազմի երիտասարդացման գործընթացը: Մենք հեռացել ենք այն տարիներից, երբ մեր ֆակուլտետը տարիներ շարունակ վերջին տեղում էր գտնվում մեծահասակ պրոֆեսորադասախոսական կազմի առումով: Կարող ենք արձանագրել, որ ներկայումս այս առումով մենք առանձնապես անհանգստանալու պատճառներ այլևս չունենք: Հատկապես վերջին տարիների կադրային փոփոխությունները էապես նպաստեցին դրան: Այսպես, ամբիոնի վարիչներից երկուսը միջին տարիքի են, ամբիոնի վարիչներից մեկը, որ նաև գիտակրթական կենտրոնի ղեկավար է՝ երիտասարդ մասնագետ է, երիտասարդ մասնագետ է նաև մյուս գիտակրթական կենտրոնի ղեկավարը, էապես ավելացել է երիտասարդ դասախոսների քանակը: Տրամաբանական է, որ երիտասարդ ղեկավարների առկայությունն, իհարկե, նպաստելու է ֆակուլտետի դասախոսական և գիտական անձնակազմերի հետագա երիտասարդացմանը:

Թեև հաշվետու տարում, ինչպես և վերջին տարիներին, ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվաքանակը փոքր է պլանով նախատեսվածից մոտ 15%-ով, կարծում եմ, որ այն կարելի է բավարար համարել: Երկուսից-երեք միլիոն բնակչություն ունեցող երկրի համար տարեկան ավելի քան 100 համալսարանական կենսաբան-մասնագետ պատրաստելը բավարար է, կարևորը շրջանավարտերի որակական չափանիշներն են: Ցավոք, այս տարի ևս գոհ չենք ուսանողների մի սովոր հատվածի գիտելիքներից: Արդեն սովորական է դարձել, որ ցանկացած կուրսում գիտելիք ստանալու ցանկություն (մոզր 13-ից բարձր) դրսևորվում է բակալավրիատի ուսանողների միայն կեսի մոտ, մնացածներն իրենց բավարար գնահատականները ձեռք են բերում դասախոսական անձնակազմի, շատ դեպքերում, չափից ավելի հանդուրժողականության շնորհիվ: Եվ նույնիսկ նման իրադրությունում անցյալ ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետից հեռացվել է 17 ուսանող, իհարկե, տարբեր պատճառներով, այլ ֆակուլտետներ է տեղափոխվել 6 ուսանող, Ազգային բանակ են մեկնել 14, վերադառնել են բանակից 6 ուսանողներ:

Գերազանց առաջադիմություն (մոզր 18-ից բարձր) հաշվետու տարում ունեցել են բակալավրիատի առկա համակարգի ուսանողների միայն 7,5%-ը (նախորդ երկու ուսումնական տարիներում եղել է համապատասխանաբար 7% և 11%), այսինքն տատանումների սահմանները բնականոն են: Մագիստրատուրայում, ցավոք, պատկերն էապես ուրիշ է, ես կասեի նույնիսկ շատ մտահոգիչ: 2016/17 ուստարում 59 մագիստրանտներից 39-ը, այսինքն 66%-ը գերազանցիկներ են, ինչը բոլորովին չի համըմկնում նախորդ երկու տարիներին դիտվող պատկերի հետ (մոտ 15% և մոտ 30% գերազանցիկներ՝ 2014/15 և 2015/16 ուստարիներում): Եվ սա այն դեպքում, երբ ավարտում էին այն տարվա համալսարան ընդունվածները, երբ դպրոցները փաստորեն չեն ունեցել շրջանավարտներ: Մա մեր դասախոսական անձնակազմի անթույլատրելի, անպատասխանատու վերաբերմունքի հետևանք է: Մեզանում, ցավոք շատերին, այդ թվում որոշ ամբիոնների վարիչներին, թվում է, որ բարձր գնահատականներ շոայլելով դեպի իրենց մասնագիտացումը կուղղորդեն բակալավրիատի շրջանավարտներին, հնարավորություն կունենան, հավաքելով ուսանողների բաղձալի վեցյակը, բացել իրենց մասնագիտացումը: Մա, իհարկե, խաբկանք է, իրականությանը բոլորովին

չհամապատասխանող մոտեցում: Բերեմ միայն մեկ փաստարկ. «Կենսաքիմիա» մասնագիտության բակալավրիատի ուսանողների միայն 7%-է գերազանց առաջադիմության սովորել, որը ցածր է «Կենսաբանություն» մասնագիտությամբ գերազանց սովորողների առաջադիմությունից, բայց կենսաքիմիայի, իսկ ներկայումս, արդեն նաև մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի մագիստրատուրայում այս ուսումնական տարում սովորում են մագիստրատուրայի 110 սովորողներից 51-ը, այսինքն 46%-ը (երկու մագիստրոսական ծրագրերում սովորում են մոտ այնքան մագիստրանտներ, որքան բացված մյուս ծրագրերում)! Եվ այս երկու մասնագիտացումները բացվում են ամեն տարի: Ներկայիս ուսումնական տարում այդ երկու մասնագիտացումների զծով ընդունվել են 31 (ընդհանուր 65-ից) ուսանողներ /պատկեր 4/: Հետևաբար, պատճառներն այլ են: Դրանք բազմապիսի են. պատասխանատվություն ունեցող դասախոսական որակյալ անձնակազմ, ուսանողների հետ տարվող ամենօրյա նպատակալաց աշխատանք, անընդհատ բարելավվող ուսումնատեխնիկական բազա, ակտիվ գիտահետազոտական գործունեություն, որի մեջ ներգրավված են լինում նաև ուսանողներ, մագիստրանտներ, հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցություն, մեծաթիվ գիտական գործուղումներ և այլն, և այլն:

Կրթության պատշաճ որակի ապահովումը մեր առջև ծառայած կարևորագույն խնդիրն է: Մենք ունենք առանձին փայլուն ուսանողներ թե՛ բակալավրիատի կուրսերում, և թե՛ մագիստրատուրայում: Սակայն ցավոք տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ ուսանողների կրթական միջին մակարդակը տարեցտարի անկում է ապրում: Կրթության որակի վրա ազդող տարաբնույթ գործոնների մասին հաշվետվություններում շատ ենք նշել: Որակի ապահովումը կախված է նաև գիտելիքն ընկալելու ուսանողների ունակությունից և, հատկապես, ցանկությունից: Ցավոք, նման ցանկություն տեսնում ենք փոքրաթիվ ուսանողների մոտ: Մեզնից պահանջվում է կրթական համակարգում նորանոր մոտեցումներ կիրառել, մասնագիտական հետաքրքրություններին նպաստող գիտական ժամանակակից գիտելիքներ ուսանողներին հրամցել, ընդ որում սկսել հանրակրթական դպրոցից: Այս առումով կարևոր է նաև Երևանի և մարզերի ավագ դպրոցներում մեր մասնագետների պարբերաբար այցելությունները, նրանց կողմից մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ զեկույցների, դասախոսությունների անցկացումը, ինչը հաշվետու տարում էլ ավելի է ընդլայնվել: Մա մեզ հնարավորություն է տալիս ավագ դպրոցների աշակերտությանն ավելի մանրակրկիտ տեղեկացնելու ֆակուլտետի մասնագիտությունների, ֆակուլտետի գիտակրթական գործունեության մասին և, ինչու չէ, նաև գովազդելու այն: Հաշվետու տարում մեր գրեթե բոլոր ամբիոնների ներկայացուցիչները մասնակցել են նման աշխատանքներին. կամ՝ գործուղվելով Հայաստանի մարզային դպրոցներ, կամ՝ հանդիպումներ ունենալով Երևանի որոշ ավագ դպրոցներում: Պարբերաբար են դարձել նաև տարբեր դպրոցների աշակերտների այցելությունները՝ հատկապես ֆակուլտետի նախկին շրջանավարտ-ուսուցիչների ղեկավարությամբ:

Գիտակրթական գործունեության պատշաճ մակարդակի ապահովման գործին լծված է ֆակուլտետի ողջ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը: Այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս (որոնցից 2-ը՝ հրավիրված համատեղողներ են) և 3 թղթակից անդամներ, գիտությունների 18 դոկտոր և ավելի քան 90 թեկնածուներ: Այս պատկառելի

գիտակրթական հանրույթը ներկայացված է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներում՝ 7 ամբիոններում, ֆակուլտետում գործող «Կենսաբանության» ինստիտուտի 10 լաբորատորիաներում և 2 գիտակրթական կենտրոններում՝ «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և հաշվետու տարում կազմավորված «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում:

Նմանատիպ կենտրոնների դերը հատկապես մագիստրոսական կրթության բարելավման առումով դժվար է գերազնահատել: Տարեցտարի հաշվետվություններում նշում ենք, որ մագիստրատուրան մեզանում դեռևս լիարժեք կայացված չէ: Շատ ենք շեշտել առկա թերացումները, սակայն, ցավոք, դրանք այսօր էլ մեզ հետ են: Կարծում եմ, անհրաժեշտություն չկա դրանց նորից անդրադառնալու, կրկնելու բազմիցս նշվածը. բոլորս էլ դրանք քաջ գիտենք: Գտնում եմ, որ դրանց մի մասի հաղթահարման գործում կարևոր դեր կարող են ունենալ միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը, ինչը պետք է դառնա մեր այս երկու գիտակրթական կենտրոնների գործունեության գլխավոր նպատակը: Այս կենտրոններում մեծ ճշգրտություն ունեցող ժամանակակից սարքերի առկայությունը հնարավոր է դարձնում արդի կարևորագույն գիտական, նույնիսկ գիտաարտադրական հիմնախնդիրների ուսումնասիրումը, որակյալ գիտական արդյունքի ստացումը:

Միջֆակուլտետային համագործակցության երկուստեք օգտավետ և տիպիկ օրինակ է արդեն ավանդույթ դարձաց նախկին Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի, ներկայումս՝ Ֆարմացիայի ինստիտուտի, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հաշվետու տարում իրականացումը մեր ֆակուլտետի տարբեր ամբիոններում՝ դեղագործության հարակից թեմաների ուղղությամբ: Կատարված աշխատանքներն, ընդհանուր առմամբ, արժանացան բարձր գնահատականի մեր քիմիկոս-գործընկերների կողմից, և ուրախալի է, որ շարունակվում են նաև այս ուսումնական տարում (14 մագիստրանտներ իրենց մագիստրոսական թեզերն են պատրաստում մեր վեց ամբիոններում):

Մագիստրոսական կրթության բարելավման գործում կարևոր եմ համարում նաև մագիստրոսական ծրագրերի լրամշակման, նոր կրթական ծրագրերի առաջարկման գործընթացը, ինչն ավարտվեց հաշվետու տարում և մեր ֆակուլտետն առաջարկեց մագիստրոսական 9 կրթական ծրագրեր՝ նոր հնչեղություն և բովանդակություն ունեցող անվանումներով: Այս ուսումնական տարում, 2017/18 ուստարվա առաջին կիսամյակից սկսել ենք արդեն բակալավրիատի ֆակուլտետի երեք մասնագիտությունների կրթական ծրագրերի լրամշակման գործընթացը: Մասնագիտությունների անվանումների մեջ առաջարկում ենք մի փոփոխություն՝ վերանվանել «Կենսաքիմիա» մասնագիտությունը «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա»: Հուսով եմ, որ այս գործընթացը նույնպես հաջողությամբ կավարտենք հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակում, ինչը նախադրյալներ կստեղծի ֆակուլտետում կրթության հետագա առաջընթացի համար:

Մագիստրոսական կրթության բարելավման գործում կարևոր է նաև միջամբիոնային և, հատկապես՝ միջֆակուլտետային ծրագրերի իրականացումը: Ցավոք, հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, այս ուղղությամբ առաջընթաց չկա: Կարծում եմ,

որ դրա պատճառը ինչպես ուսանողների թվաքանակի նվազումն է, այնպես էլ մեր գործընկերների մեծ մասի մոտ հին, կոնսերվատիվ, «տեղայնական» մտածելակերպն է, թեև նման ծրագրերի իրականացումը ԵՊՀ զարգացման առաջիկա հնգամյա ռազմավարական ծրագրի հրամայականն է:

Գաղտնիք չէ, որ կրթության պատշաճ որակի ապահովման գործում կարևոր է նաև ֆակուլտետի ուսումնաստեխնիկական բազան, արդի սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների առկայությունը: Ֆակուլտետում դրանց ձեռքբերման տարբեր աղբյուրներ կան, եթե նկատի ունենանք մեզանում ուսումնական և գիտական գործընթացների անքակտելի կապը, այսինքն այն, որ ֆակուլտետի ուսումնական գործընթացները սերտորեն կապված են ամբիոնների և հետազոտական ինստիտուտի գիտական ուսումնասիրությունների հետ և գիտական դրամաշնորհների միջոցներով հայթայթված սարքերն ու ռեակտիվները օգտագործվում են նաև ուսումնական պրոցեսներում: Ֆինանսավորման աղբյուրներն են՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հատկացվող փոքրածավալ գումարը (1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԳՊԿ-ից բազային ֆինանսավորում ստացող գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները:

Ուրախալի է, որ հաշվետու տարում ֆակուլտետի շատ ամբիոններ արժանացել են տարաբնույթ միջազգային դրամաշնորհների, որոնց ֆինանսավորման մի մասն օգտագործվել է սարքավորումներ և ռեակտիվներ ձեռքբերելու համար: Զուտ կրթական դրամաշնորհներից հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում (ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ. Անահիտ Առաքելյան), «TEMPUS»-ի դրամաշնորհով իրականացվող ծրագրի ուղղությամբ (2016 թվականին ձեռք բերված սարքավորումները՝ կենսաքիմիական անալիզատոր, մանրադիտակներ, հեմոգլոբինոմետր, Elisa reader, նոութբուքեր և այլ, օգտագործվել են ուսումնական գործընթացներում):

Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոններն ունեցել են ոչ շատ մեծ ծավալի արտաբյուջետային ֆինանսավորում՝ 104.55 մլն ՀՀ դրամ, 99.500 ԱՄՆ դոլար և 60.400 եվրո ընդհանուր ծավալով (միասին՝ արտահայտված ԱՄՆ դոլարով՝ մոտ 385.000): Սա, իհարկե համեմատած ֆակուլտետում առկա 2 գիտակրթական կենտրոնների վերջին տարիներին ստացած միանվագ 600.000 և 650.000 ֆինանսավորման հետ, քիչ է, սակայն իր լուրման ունի գիտակրթական գործընթացների առաջընթացում: Ինչպես և նախորդ տարի, արտաբյուջետային ֆինանսավորման, տարաբնույթ դրամաշնորհներից ստացված գումարների մեծ մասը պատկանում է «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնին» (ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արմեն Թոշունյան) և ոչ միայն վերը նշված նորարարական կենտրոնի առումով, այլև ամբիոնում իրականացվող 3 թեմատիկ, և 10(!) միջպետական և միջազգային հիմնադրամներով ֆինանսավորվող կրթական նախագծերի առումով (44.3 մլն ՀՀ դրամ, 78.000 ԱՄՆ դոլար, 6.000 եվրո): Այս առումով երկրորդը, թերևս, Կենդանաբանության ամբիոնն է (ամբիոնի վարիչ՝ պրոֆ.Մարինե Առաքելյան)՝ 3 թեմատիկ և 7 միջպետական և միջազգային

հիմնադրամներով ֆինանսավորվող կրթական նախագծեր՝ 19.5 մլն ՀՀ դրամ, 12.000 ԱՄՆ դոլար և 7.500 եվրո ֆինանսավորմամբ: Հաջորդը՝ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնն է (ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյան)՝ 2 թեմատիկ և 4 միջպետական և միջազգային հիմնադրամներով ֆինանսավորվող կրթական նախագծեր՝ 16.9 մլն ՀՀ դրամ, 14.000 եվրո ֆինանսավորմամբ: Մյուսը՝ Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնն է (ամբիոնի վարիչ՝ դոցենտ Նելլի Հովհաննիսյան)՝ 1 թեմատիկ և 4 միջազգային հիմնադրամներով ֆինանսավորվող ծրագրեր՝ 9.5 մլն ՀՀ դրամ, 9.500 ԱՄՆ դոլար, 15.000 եվրո: Ցավոք, մնացած ամբիոններում ֆինանսավորումն ավելի ցածր է:

Այսպիսով, նշված գիտական և կրթական միջազգային դրամաշնորհների ֆինանսավորման առկայությունը ֆակուլտետում, ՀՀ Գիտության պետական կոմիտեի բազային և թեմատիկ ֆինանսավորման հետ մեկտեղ, էապես նպաստում է նյութատեխնիկական բազայի համալրմանը, կրթական գործընթացների բարելավմանը ֆակուլտետում:

Ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակն ու վիճակը, ընդհանուր առմամբ բավարար են և նպաստել են ուսումնական գործընթացների բարեհաջող անցկացմանը: Ցավոք պիտի այս անգամ էլ նշեմ, որ դեռևս լուծված չէ համակարգչային պրոյեկտորների լսարաններում տեղադրման հարցը: Հաշվետու տարում ևս դիմել ենք ռեկտորատ գոնե երկու նման պրոյեկտորներ ստանալու, սակայն դեռևս հարցը լուծված չէ: Որոշ ամբիոնների և գիտահետազոտական լաբորատորիաների համակարգիչներ, լապտոփեր ստանալու խնդրանքը բավարարվել է մասամբ: Հուսանք, որ եթե ոչ մինչև տարվա վերջ, ապա գոնե հաջորդ տարվա ընթացքում ռեկտորատը լուծում կտա այս հարցերին:

Ինչպես միշտ, հաշվետու տարվա ընթացքում էլ, ուսումնական գործընթացների կազմակերպումը ֆակուլտետում պրոբլեմներ չի հարուցել շնորհիվ դեկանատի աշխատակիցների՝ դեկանի տեղակալներ Կարեն Ղազարյանի, Հենրիկ Մեմերջյանի, ֆակուլտետի խորհրդի գիտքարտուղար Աննա Կարապետյանի, ինչպես նաև Ռուզան Յորդանյանի և Մարջան Գևորգյանի պատասխանատու աշխատանքի, ում ես հայտնում եմ շնորհակալություն բարեխիղճ աշխատանքի համար: Ուսումնական գործընթացների բարելավման գործում որոշակի դեր ունեն նաև ֆակուլտետի կուրատոր-դասախոսները, ինչպես նաև մեր ուսանողները, ովքեր անանուն սոցիոլոգիական հարցումների ժամանակ, որոշ դեպքերում, բարձրացնում են կարևոր հարցեր: Ուսանողների բարձրացրած հարցերին աշխատում ենք ականջալուր լինենք: Հաշվետու տարում լուծվեց ֆակուլտետի ուսխորհրդին առանձին սենյակ տրամադրելու ուսանողների կողմից բարձրացրած հարցը:

Մեր ֆակուլտետի ուսումնական գործընթացներում մեծ է ուսումնական պրակտիկաների դերը: Հաշվետու տարում, ինչպես միշտ, դաշտային, փորձարարական և մանկավարժական պրակտիկաները, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով: Ցավոք, Հանքավանի հանգրվանի պայմանների բարելավում մոտ ապագայում չենք կարող ակրնկալել: Մնում է բավարարվել եղածով՝ դաշտային պրակտիկաներից առաջ Հանքավանի հանգրվանում կատարելով ամենամյա սանիտարական-վերականգնողական միջոցառումներ:

Նմանատիպ ամենամյա նորոգման կարիք ունի նաև համալսարանի տարածքում գտնվող ջերմոցը, որն օգտագործվում է ֆակուլտետի ամբիոնների կողմից ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև աշխատակիցների գիտական թեմաների կատարման համար: Այստեղ վերանորոգման աշխատանքներ տարվում են դեպքից դեպք, և դեռևս բավական գործ կա անելու: Ֆակուլտետի մասնաշենքի տանիքի տարածքի մի մասում գտնվող կենդանիների բուծարանը թեև վերանորոգված է, սակայն չունի հնարավորություններ՝ հատուկ փորձասեղաններ և այլ պարագաներ, ինչը կապահովեր բուծարանի լիարժեք օգտագործումը: Հուսանք, որ տարիների ընթացքում բարձրացվող այս հարցերը կստանան դրական լուծում մոտ ապագայում, մանավանդ որ հնարավոր է նաև դեղագետ-գործընկերներն օգտվեն մեր կենդանանոցից:

3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ. հաշվետու տարում ֆակուլտետի գիտահետազոտական գործունեությունը գրեթե ամբողջությամբ իրականացվել է ֆակուլտետում գործող “Կենսաբանության” գիտահետազոտական ինստիտուտի շրջանակներում: Ինստիտուտը, լինելով ներֆակուլտետային կառույց և անքակտելի կապերով միահյուսված լինելով ամբիոնների հետ համատեղությամբ գործող մեծ թվով աշխատակիցների և համատեղ օգտագործվող նյութատեխնիկական բազայի առումով, մինևույն ժամանակ բավական ինքնուրույն կառույց է իր տնօրինությամբ, Գիտական խորհրդով և իր յուրահատուկ գործառույթներով: Ինչպես նշել եմ նաև անցյալ տարվա հաշվետվության ժամանակ, ֆակուլտետի գիտական աշխատանքների առավել մանրակրկիտ հաշվետվություն պետք է ակընկալել ինստիտուտի տնօրենի զեկույցում, ինչը, կարծում եմ կկայանա որոշ ժամանակ անց, մինչ այս տարվա ավարտը: Ես այսօր հպանցիկ կներկայացնեմ ֆակուլտետի գիտական գործունեության միայն որոշ, իմ կարծիքով առավել կարևոր և ընդհանրական պատկերը:

Նախ նշեմ, որ հաշվետու տարում, ինչպես վերջին տասնամյակի ընթացքում, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանի հատկապես հրատարակումների քանակության և նաև որակի առումով: Վերջին տարիներին այս տեսակետից ֆակուլտետն եղել է առաջատարը համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների մեջ (վերջին 5 տարում միայն մեկ անգամ է զիջել ֆիզիկայի ֆակուլտետին): Հաշվետու տարում, թեև հրատարակումների ընդհանուր թվաքանակով (234) զիջում ենք նախորդ տարվա ցուցանիշին (272), համոզված եմ կմնանք համալսարանի առաջատարների թվում: Հաշվետու տարում մեր աշխատակիցները հրատարակել են գիտական 129 հոդված, որոնց կեսից ավելին Հայաստանից դուրս, մասնակցել են մեծ թվով գիտաժողովների՝ հրատարակելով 96 գիտական թեզիսներ, որոնց 85%-ից ավելին՝ միջազգային կոնֆերանսներում, հրատարակել են նաև 6 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, 2 մենագրություն և 1 դասագիրք: Աղյուսակում բերված է տարբեր ամբիոնների ներդրումը: Այստեղ նույնպես տեսնում ենք, որ առյուծի բաժինը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնին է՝ 97 հրատարակում! Զարմացնում է Կենդանաբանության ամբիոնի աշխատակիցների

հրատարակումների համեստ լուման, եթե նկատի ունենանք մնացած պարամետրերում ամբիոնի բավական բարձր ցուցանիշները:

Ութ տասնյակից ավելի միջազգային գիտաժողովներին մասնակցությունն իրականացվել է հիմնականում գիտական գործուղումների արդյունքում, որոնց ճնշող մեծամասնությունը (90%-ից ավելին) իրականացվել է արտաբյուջետային ֆինանսավորման հաշվին: Հաշվետու տարում մեր մասնագետները եղել են 75 գործուղումներում, 10՝ երկարաժամկետ և 65 կարճաժամկետ: Այստեղ նույնպես առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է (գործուղումների կեսից ավելին): Ուրախալի է, որ գործուղվել են նաև ուսանողներ, ասպիրանտներ (Միրզոյան Սեդա, Թուրաբյան Աստղիկ՝ Գերմանիա, Ազարյան Անի՝ Սադաթեյան Անի, Հարությունյան Պարզև՝ Նորվեգիա), երիտասարդ գիտնականներ:

Ֆակուլտետի աշխատակիցներից 7-ը հաշվետու տարում պաշտպանել են թեկնածուական, իսկ 2-ը՝ Կարեն Թոչունյանը և Արա Անտոնյանը՝ դոկտորական ատենախոսություններ: Հաշվետու տարում պրոֆեսորի գիտական կոչմանն է արժանացել գիտությունների դոկտոր Գալինա Հովհաննիսյանը, դոցենտի կոչում են ստացել Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Անահիտ Առաքելյանը և դասախոս Հասմիկ Աղաբաբյանը: ՀՀ Գիտակետում մրցույթում Արդյունվետ երիտասարդ գիտաշխատողի կոչմանն են արժանացել Կարեն Թոչունյանը, Լիլիթ Հակոբյանը, Հարություն Սարգսյանը: Կ.Թոչունյանը, Ս.Միրզոյանը և Հ.Գևորգյանն արժանացել են ԱՐՓԱ հիմնարկի նորարարության մրցանակին:

Հաշվետու տարին արժանահիշատակ էր նաև մեր ֆակուլտետի ամբիոնների մասնակցությամբ յուրահատուկ միջազգային լաբորատորիաների ստեղծման առումով: Այսպես, Ռուսաստանի Դաշնության Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանում ստեղծվել է Կենսատեխնոլոգիայի միջազգային լաբորատորիա իրենց, մեր Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի աշխատակիցների և Նիդեռլանդների Քրոնինգենի Կիրառական գիտությունների Հանգե համալսարանի կլանքի մասին գիտության և տեխնոլոգիայի ինստիտուտի մասնագետների հետ համատեղ:

Միջազգային համագործակցության մեկ այլ օրինակ է ՀՀ ԿԳ նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության համագործակցության շրջանակներում ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնում մոլեկուլային բջջագենետիկայի բնագավառում գիտակրթական ծրագրերի մշակման նպատակով ստեղծված «Հայ-գերմանական համատեղ գիտահետազոտական լաբորատորիան»: Լաբորատորիայում ուսումնա-սիրվում են անպտղությամբ տառապող հիվանդների մոտ մոլեկուլային-բջջագենետիկական խաթարումները, AREAL էլեկտրոնների արագացուցչով ճառագայթված մարդու արյան բջիջներում նուկլեոտիդային հաջորդականությունների կրկնությունների թվի փոփոխությունները և բջջային զծերում ֆիզիկական և քիմիական մուտագեններով մակածված ԴՆԹ-ի երկշղթա վնասվածքների ռեպարացիան: Հատկանշական է, որ թվարկված հետազոտություններն իրականացվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ակտիվ մասնակցությամբ: Նախատեսվում է իրականացնել նաև կրծքագեղձի քաղցկեղով տառապող հիվանդների բջիջներում մոլեկուլային գենետիկական հետազոտություններ: Հայ-գերմանական

համագործակցության շրջանակներում այս տարի իրականացվել են երկու հայ մասնագետների գործուղումներ Յենայի Մարդու գենետիկայի ինստիտուտ: Հաջորդ տարում հայկական կողմը հյուրընկալելու է մոլեկուլային բջջագենետիկայի բնագավառում առաջատար գերմանացի մասնագետների, որոնք կանցկացնեն բաց դասախոսություններ և գործնական աշխատանքներ հայ մասնագետների և ուսանողների համար:

Նույն՝ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնում, հաշվետու տարում ֆրանսահայ գենետիկ դոկտոր Քրիստոֆ Թերզիանի նվիրաբերած միջոցներով, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի ակտիվ միջնորդությամբ, ամբողջովին վերազինվեց մոլեկուլային գենետիկայի նոր լաբորատորիան, ձեռքբերվեցին ժամանակակից սարքավորումներ մոլեկուլային-գենետիկական ուսումնասիրությունների համար: Ամբիոնի այդ լաբորատորիան ներկայումս կրում է Քրիստոֆ Թերզիանի անունը: Արդի տեխնիկական հնարավորությունները կնպաստեն մոլեկուլային բջջագենետիկայի, գենետիկական թունաբանության բնագավառներում գիտական նախագծերի հաջող իրականացմանը: Արդեն իրականացվել են հայկական խաղողի տարբեր սորտերից անջատված ԴՆԹ-ի ամպլիֆիկացիա պոլիմերազային շղթայական ռեակցիայի կիրառմամբ: Այստեղ նույնպես հետազոտություններն իրականացվում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ակտիվ մասնակցությամբ:

Սրանով թույլ տվեք սահմանափակել գիտական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, առավել մանրամասն տեղեկատվություն ակնկալելով «Կենսաբանության» ինստիտուտի հաշվետվության ժամանակ: Ի մի բերելով միայն նշեմ, որ հաշվետու տարում ավելացել են արտասահմանյան գիտնականների այցելությունները, գիտական զեկույցները դասախոսությունները, ինչը վկայում է ֆակուլտետի, հատկապես Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, Գենետիկայի և բջջաբանության, Էկոլոգիայի և բնության պահպանության, Կենդանաբանության ամբիոնների մասնագետների միջազգային համագործակցության ասպարեզում առաջընթացի մասին:

4. Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառներ

Հաշվետու տարում շարունակվել է ֆակուլտետի բնականոն գործունեությունը նաև այլ բնագավառներում: Ինչպես և վերջին տարիներին, դրական կարելի է համարել ֆակուլտետի Գիտխորհրդի (գիտքարտուղար՝ դոցենտ Աննա Կարապետյան), ֆակուլտետի Արհբյուրոյի (նախագահ՝ դոցենտ Մեդոբա Խաչատրյան) գործունեությունը: Ֆակուլտետի Արհբյուրոն առավել կարիքավոր աշխատակիցներին նպաստներ են տրամադրել, տարբեր բարեգործական ֆոնդերից առավել բարձր առաջադիմություն ունեցող կարիքավոր ուսանողների մի մասին տվել է միանվագ օգնություն: Աշխատակիցները հնարավորություն են ունեցել իրենց հանգիստն անցկացնելու համալսարանի ծաղկածորյան հանգրվանում՝ ձեռք բերելով զեղչ գներով ուղեգրեր:

Ֆակուլտետի ղեկանատն անմիջական կապի մեջ է եղել ֆակուլտետի Ուսանողական խորհրդի հետ, շատ դեպքերում օժանդակել խորհրդի նախաձեռնություններին՝ ուսանողական ցերեկույթներ, հավաքներ կազմակերպելու և այլ գործերում: Գտնում եմ, որ

հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, թե Ուսխորհրդի, և թե ուսանողական գիտական ընկերության աշխատանքը դրական պիտի համարել:

Գիտեք, որ հաշվետու տարում կիրառվել է պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեության արդյունքների հիման վրա հավելավճարի հատկացման էապես նոր համակարգ: Արդյունքները դեռևս ի մի բերված չեն, ամենայն հավանականությամբ՝ կհրապարակվեն ս.թ. դեկտեմբերին: Հուսով ենք, որ համակարգն ավելի օբյեկտիվ կլինի նախորդից, և տրամադրվելիք հավելավճարի չափը կորոշվի այս կամ այն դասախոսի կամ գիտաշխատողի գործունեության արդյունավետությամբ:

Հաշվետու տարում շարունակվել է 2011 թվականի սեպտեմբերից սկսված ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը: Մեր ֆակուլտետն ինչպես միշտ, այնպես էլ հաշվետու տարում ակտիվորեն ներգրավված է եղել այդ գործընթացներում:

5. Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի կատարում

Հարգելի գործընկերներ, գիտեք, որ հաշվետու տարում շարունակվել է ԵՊՀ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում, բնականաբար, ուրվագծվել են նաև մեր ֆակուլտետի զարգացման հիմնական ուղիներն ու գործունեության գերակայությունները: Ավարտվել է ծրագրի երկրորդ տարին և կարող ենք հաշվետու լինել 2017 թվականի որոշ աշխատանքների կատարման առումով: Հակիրճ ներկայացնեմ ռազմավարական ծրագրի շրջանակներում կատարված որոշ աշխատանքներ: Ժամանակացույց-պլանում 2017թ-ին նախատեսված 54 գործողություններից, միջոցառումներից և ծրագրերից լիարժեք իրականացվել է 42-ը, որոնցից շատերը բերվեցին հաշվետվության վերը շարադրանքում: Դրանցից կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք ունեն առավել կարևոր նշանակություն.

- Գնահատվել են կենսաբանության ֆակուլտետում գործող մագիստրոսական 11 ծրագրերը և դուրս են բերվել դրանց ուժեղ և թույլ կողմերը, որոնց հիման վրա վերանայվել են ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը, մշակվել են նոր այդ թվում՝ միջմասնագիտական մագիստրոսական ծրագրեր՝ հիմնվելով որակավորումների ազգային շրջանակի և միջազգային առարկայական հենանիշների, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների վրա:
- Սկսվել է կենսաբանության ֆակուլտետում գործող "Կենսաբանություն", "Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա" և "Կենսաքիմիա" բակալավրի կրթական ծրագրերի լրամշակման գործընթացը, դուրս են բերվում դրանց ուժեղ և թույլ կողմերը, որոնց հիման վրա կիրականացվի ծրագրերի կառուցվածքի և բովանդակության բարելավումը: Առաջարկվում է «Կենսաքիմիա» մասնագիտությունը վերանվանել «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա»:
- Զարգացվել և համալրվել է «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» առարկայի արդեն ներդրված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգը՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար: Աշխատանքներ են տարվել «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ» առարկայի վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ:

- Ընդլայնվել է ֆակուլտետի ամբիոններում, «Կենսաբանություն» Գ/Հ ինստիտուտում, «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում իրականացվող գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը:
- Դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով զարգացվել են ընդունելության մարքեթինգային գործընթացները, որի շրջանակում ավագ դպրոցների աշակերտների համար ֆակուլտետում իրականացվել է ամառային դպրոց, պարբերաբար կազմակերպվել են սեմինարներ և թրեյնինգներ, աջակցվել է «կենսաբանություն» առարկայի ամենամյա օլիմպիադայի անցկացման գործընթացին, ապահովվել և ընդլայնվել է ֆակուլտետի մասնագետների մասնակցությունը մայրաքաղաքի ավագ դպրոցների, ինչպես նաև որոշ մարզային դպրոցների դասընթացներին:
- Գերմանական GIZ կազմակերպության “Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում” ծրագրի շրջանակներում իրականացվել է ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսումնասիրությունն՝ աշխատաշուկայի հետ ունեցած համագործակցության գնահատման, այդ համագործակցության բարելավման առումով:
- ԵՊՀ-ի միջազգայնացման և գործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձևավորվել Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի հետ հաջորդ ուսումնական տարում կրկնակի դիպլոմով «Կիրառական կենսատեխնոլոգիա» մագիստրոսական համատեղ կրթական ծրագրի այցկացման համար: Ցավոք, մեկ տասնյակից ավելի ծրագրեր չեն իրականացվել կամ կատարվել են թերացումներով: Ռազմավարական ծրագրի չիրականացված գործողությունների մի մասը պայմանավորված է համահամալսարանական խնդիրներով (համապատասխան նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների բացակայություն), մի մասն էլ մեր, ներֆակուլտետային բնույթ ունեն: Հուսով ենք, գալիք տարվա ընթացքում եղած թերացումները կշտկվեն: Մասնավորապես.
- Նախատեսում ենք 2017-2018 ուստարում ստեղծել բակալավրիատի 3 կրթական ծրագրերի գծով (մեկական՝ «Կենսաբանություն», «Կենսաֆիզիկայի և կենսաինֆորմատիկայի», «Կենսաքիմիայի և կենսատեխնոլոգիայի» մասնագիտություններում) ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և իրականացվող 3 ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար:
- Նախատեսվում է ստեղծել ֆորմատիվ գնահատման համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել կենսաբանության ֆակուլտետի բոլոր ուսումնական ծրագրերում հետազոտական բաղադրիչի իրականացման արդյունավետությունը:
- Կենսաբանության ֆակուլտետի հետ շրջանավարտների շարունակական կապի ապահովման նպատակով ֆակուլտետի ղեկնաստում նախատեսում ենք ստեղծել տվյալների բազա, որը պետք է ընդգրկի շրջանավարտի կոնտակտային տվյալները, աշխատավայրը, մասնագիտական հմտությունները:

Թերևս այսօր. այս տարի նույնպես զեկուցումն ծավալուն ստացվեց: Բանն այն է, որ քիչ չեն կատարված աշխատանքները, քիչ չեն նաև թերացումները: Ինչնից, պիտի նշեմ, որ

Ֆակուլտետում կատարված աշխատանքները ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինստիտուտի, կենտրոնների գիտաշխատողների, դեկանատի և ընդհանրապես, ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և մեր օրինակելի ուսանողության համատեղ, նպատակամղված գործունեության արդյունք են: Հայտնում եմ նրանց բոլորին իմ խորին շնորհակալությունը, հավաստիացնում, որ կենսաբանության ֆակուլտետը այսուհետև ևս կպահպանի իր բարձր վարկանիշը:

Շնորհակալություն ուշադրության համար:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ռ.Ս. Հարությունյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ա.Հ.Թռչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Պ.Հ.Վարդևանյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ պրոֆ. Է.Ս. Գևորգյանը բավականին մանրամասն ներկայացրեց կենսաբանության ֆակուլտետում վերջին տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքները և շնորհակալություն հայտնեցին դեկանին և դեկանատին՝ լավ աշխատանքի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հավանություն տալ վերջին տարվա ընթացքում կենսաբանության ֆակուլտետում կատարված աշխատանքներին և դեկանի աշխատանքը գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Ա.Ֆ.Կարապետյան